Արձանագրություն N 3
ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22 սեպտեմբերի 2021թ
ժամը 11:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Հասմիկ Ղուլյանը, Նառա Բաղդասարյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում «ԲԻԳ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն համակարգով հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ որպես շտկված փաստաթուղթ ներկայացված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/70» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցության դիմում հայտարարությունը (հավելված 1-ը) և իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիրը:

Հանձնաժողովը հիմք ընդունելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները, քննարկման արդյունքում որոշեց մասնակցի ներկայացրած շտկված փաստաթղթերը գնահատել անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

3. Ներկայացված հայտի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ մերժել «ԲԻԳ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն, հետևյալ հիմնավորմամբ՝ հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերով սահմանված պայմաններին՝ դիմում հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-21/6 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված պահանջներին՝ հրավերի պահանջներին համապատասխան լրացված չէ հավելված 1-ի 2-րդ կետի ձևաչափով ներկայացված իրական շահառուի տվյալները, լրացված չէ իրական շահառուի վերաբերյալ ներկայացված հայտարարագրի 1.3.2 կետը, 4.6.2 կետը:

բ/ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հետևյալ հիմնավորմամբ՝ պայմանագիր չի կնքվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի		
նախագահ	_____	Ս. Մաթևոսյան
անդամներ՝	_____	Հ. Ղուլյան
	_____	Ն. Բաղդասարյան
քարտուղար՝	_____	Գ. Ջանջուղազյան